

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐՋ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արդեն հրապարակի վրա է Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» մեծածավալ և արժեքավոր աշխատությունը: Այս համեստ վերնադիրը կրող մենագրությունը ըստ էության մի յուրատեսակ հանրագիտարան է ժամանակակից արևելահայ գրական լեզվի բայի էության, նրա բառային միավորների ճանաչման, սևոր լուսաբանման և քերականական բաղմազան դրսևորումների մասին:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվի կառուցվածքային իրողությունների մեջ հիմնական տեղ է դրավում բայը, որի մասին մի շարք ուշագրավ աշխատություններ են գրվել վերջին տասնամյակում և՛ տեսական, և՛ մեթոդական նպատակներով: Այս աշխատության մեջ հեղինակը վերադասատում, լրացնում և խորացնում է բայի նախորդ տեսական մշակումները, տարբեր տեսանկյունից բնութագրում և սիստեմավորում բայը, գիտական նոր, ավելի բարձր աստիճանի վրա բարձրացնում բայի հետազոտման տեսական հարցերը:

Բայի համակողմանի ուսումնասիրությունը հեղինակից պահանջել է մանրակրկիտ և հրակայական աշխատանք ինչպես փաստական նյութի ընդգրկման, նրանց դասդասման ու գիտական վերլուծման, այնպես էլ լեզվական պրոցեսների ըմբռնման և տեսական ընդհանրացումների կատարելու մեծագույն կարողություններ:

Ա. Աբրահամյանի այս մեծարժեք աշխատությունն սկսվում է բայի խոսքի մասային բնորոշման ու բառային բնույթի բաժնով, որտեղ բայիմաստը բնկվում է օբյեկտիվ շարժման, նրա բացարձակ և հարաբերական դրսևորումների հաշվառումով, ըստ բառի մասնավոր-բառական իմաստների ու ընդհանուր քերականական նշանակության: Բայերի խոսքի մասային խումբը որոշելիս հեղինակն ամենից առաջ նկատի ունի խոսքի մասային ընդհանուր արժեքը. բայի համար այդ ընդհանուրը գործողության և եղելության գաղափարի դրսևորումն է՝ բայիմաստը: Բայ-բառի մասնավոր իմաստը այդ ընդհանուր իմաստի կոնկրետ դրսևորումն է: Հիմք ընդունելով դիալեկտիկական մատերիալիզմի տեսությունը շարժման ու նրա փոփոխության մասին՝ հեղինակը ճիշտ կերպով ընդունում է, որ բայական իմաստն իր էությամբ արտացոլում է մատերիալի օբյեկտիվ բնույթ ունեցող շարժումը, ուստի որպես խոսքի մասի նրան հատուկ է հատկանիշի արտահայտումը: Սակայն բայը, որպես հատկանիշ արտահայտող խոսքի մաս, տարբերվում է հատկանիշ արտահայտող այլ խոսքի մասերից նրանով, որ նա փոփոխվող շարժման հետ կապված հատկանիշ է դրսևորում: Նկատի ունենալով հայերենի բայի անփոփոխ և փոփոխված ձևերի հանրագումարը՝ Ա. Աբրահամյանը իրավամբ նշում է, որ նրան հատուկ են բայիմաստի, սևոր, բայական հոլովառության, խոնարհման, եղանակի, ժամանակի, դեմքի ու նրա թվի, կերպ-վիճակային քերականական կարգերն ու հատկանիշները: Բայց քանի որ յուրաքանչյուր բայածեղ լուծի քերականական այս բոլոր կարգերը միաժամանակ, այդ պատճառով բառական յուրաքանչյուր ձև, որ բայ է կոչվում, ամենից առաջ հանդես է գալիս ընդհանուր բայիմաստով, սևոր և բայական հոլովառությամբ:

Վերհանելով բայական բառային կառուցվածքի առանձնահատկությունները՝ հեղինակը բայական երկու ձևերից (անդեմ և դիմավոր) իրրն բառական միավոր, ելակետային ձև ընդունում է անորոշ դերբայը, որը բայի բոլոր փոփոխվող ձևերի հիմքն է և մեր լեզվական ըմբռնմամբ ներկայացնում է իրրն ուղիղ, չփոփոխված ձև:

Մենագրության մեջ գիտական մեծ արժեք է ներկայացնում հայերենի բայական բառային ուսումնասիրության բաժինը, որտեղ հեղինակը գտնում է, որ բայ-բառային, որպես բառային ինքնուրույն միավոր, իր հիմնային և արմատական առումներով միշտ ավելին է, քան նրա արմատը, այլ խոսքով՝ հայերենում բայական բառայինները բաղադրված են, ոչ միաձևային: Այս օրենքից բացառություն կազմող փոքրաթիվ բալերը միայն հաստատում են հեղինակի հետևությունը՝ ճշտություն: Այսպիսով, հեղինակի ձևեր բերած կարևոր արդյունքն այս հարցում այն է,

1 Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, գիրք 1, 722 էջ:

որ ժամանակակից գրական հայերենում ոչ միայն անորոշ դերբայը, այլև՝ բայական բոլոր ձևերը (դերբայական և դիմավոր) բաղադրված են:

«Բայական բառույթի բաղադրված լինելը հայերենին հատուկ է մեզ հայտնի նրա ամենավաղ շրջանի տվյալներով» (էջ 46): Այդ հիման վրա ժամանակակից հայերենի բայական բառույթները, ըստ բաղադրության, հեղինակը բաժանում է երկու հիմնական խմբի՝ համադրական և հարադրական կամ վերլուծական:

Բնագրային փաստերի խոր և հմտալից վերլուծման հիման վրա հեղինակը մանրամասնորեն հետազոտում է բաղադրության այս երկու հիմնական խմբերն առանձին-առանձին: Ի տարբերություն հայագիտության ձեռք բերած նախորդ նվաճումների՝ Ա. Աբրահամյանը ժամանակակից հայերենի բայական կազմություններն ուսումնասիրել է համակողմանիորեն և շատ ընդարձակ պլանով: Ուսումնասիրության այդ ընդարձակ պլանի մասին մոտավոր գաղափար կազմելու համար վերջիններ թեկուզ բայական համադրական կազմությունների բաժինը (էջ 48—156), Այս ընդարձակ բաժնում տարբեր տեսանկյուններով հետազոտելով ժամանակակից հայերենի բայական համադրական կազմությունները՝ հեղինակը հանգամանորեն ցույց է տվել —ել, —ալ, —անալ (ան—ալ) մասնիկների բայակազմական նախորդ և այժմյան դերը, նշել հին գրական լեզվի համեմատությամբ ժամանակակից արևելահայ գրական լեզվի բայական համադրական բառաձևերի բառակազմական միջոցների պակասելը՝ նրանց ընդհանրացման ու միավորման հաշվին, որը մեծ դեր է խաղացել բայական ձևերի կանոնավորման ու միօրինականացման գործում, սահմանադրել է բայական բառույթների գոյացման յուրահատկությունները, նրանց առաջացման հանգամանքները գրաբարից, հայ բարբառներից ու միջին հայերենից, ցույց տվել բայակազմական ծավալման միտումը, բայական մասնիկներով կազմված բառույթների իմաստային խմբավորումները՝ այս բոլոր դեպքերում կատարելով փաստերի պատմական գնահատում: Բայակազմական մասնիկավորումը հեղինակը ուսումնասիրել է հաշվի առնելով նաև շեշտի հետ կապված հնչյունափոխական օրենքները, բառույթների հարաբերակցության որոշման համար օգտագործելով հնդեվրոպական ծագում ունեցող ստուգաբանված արմատների տրվյալները, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ անվանական բառույթները նախորդել են բայական բառույթներին: Մենագրության այս բաժնում զարգացնելով հիմնական ձևույթի տեսությունը՝ հեղինակը դրսևում է, որ հիմնական ձևույթի բառույթ զանազան պատմական բնույթ ունի, այն ստատիկ վիճակ չէ, ճիմնական ձևույթը աստիճանաբար է ձեռք բերում բառակազմավորի հատկանիշները, ըստ այսմ ստուգաբանական հիմունքներով ցույց են տրվում մի շարք արմատներ, որոնք սերվելով հնդեվրոպական ընդհանուր շրջանի դանազան նշանակություններ ունեցող արմատներից, հայերենի մեջ ձեռք են բերել բառական իմաստի խիստ որոշակիություն և ինչպես գրային, այնպես էլ նախագրային շրջաններում ենթարկվել ինչ հայերենի կառուցվածքային հատուկ մասնիկավորման: Ինչպես տեսնում ենք, շոշափած խնդիրները ոչ միայն մեծ հետաքրքրություն, այլև գիտական կարևոր արժեք են ներկայացնում ընդհանուր արմատ ունեցող բառույթների հարաբերակցության որոշման տեսակետից: Ոչ բայական և բայական բառույթների միջև հեղինակը նշում է երեք տիպի հարաբերակցություն. դրանք են՝ ա) Բայական բառույթի առաջացումը ոչ բայական բառույթից, բ) Ոչ բայական բառույթի առաջացում բայական բառույթից, գ) Զուգահեռ ճյուղավորումներ ընդհանուր արմատից: Համադրական բայակազմության բաժինն ընդգրկում է փոխառությունների հետ կապված բայակազմության հատվածով, որտեղ մասնավորապես ընդգծվում է բայափոխառության նոր երևույթը ժամանակակից հայերենում, արժեքավորվում է —ել, —ալ մասնիկների և —ցն, ացնել, (—ա)վոր ածանցների կարևոր դերը փոխառու լեզվի բայական հիմնական ձևույթի օգտագործման հիման վրա: Բայակազմության այս բաժինն ավարտվում է կրկնավոր բայերով: Համադրական կրկնավոր բայերը երկու շերտի բաժանելով՝ հեղինակը մանրամասնորեն վերլուծում է հին գրական լեզվից եկող և ժամանակակից հայերենում գործածվող կրկնավոր բայերը և անմիջականորեն բարբառների հետ կապված համադրական կրկնավոր բայերի կիրառությունները ժամանակակից հայերենում, նշում նրանց կազմության (արմատների կրկնությամբ, հնչյունափոխությամբ, տարնմանության օրենքով, հնչյունների հավելումով) խմբերը, իմաստաբանական առանձնահատկությունները, արդի ըմբռնումով իբրև արմատ ճանաչելով բնաձայնական հնչյունախմբերի շուրջ 140 տեսակ՝ շեշտված զուգահեռ արմատաձևերը, Այստեղ ևս հետևողականորեն պաշտպանում է արմատների գոյացման համար այն տեսակետը, ըստ որի նախապես բնաձայնական բայերի մեջ էական արմատը եղել է առաջին բաղաձայնը, որը միացել է մի ուրիշ բաղաձայնի հետ՝ առաջ բերելով բնաձայնական արմատ, իսկ հետագայում այդ արմատները հարստացել են նաև այլ հնչյուններով, որոնք սկզբում ածանցական յուրահատուկ նշանակություն են ունե-

ցել, բայց հետագայում աստիճանաբար ձուլվել են արժատերերին: Վերոհիշյալ հարցերով մենք, իհարկե, չսպառնցինք հենց թեկուզ մենագրության այս բաժնում լուսաբանված հարցերը: Սակայն ի լրումն այս բոլորի՝ ուսումնասիրված բոլոր հարցերը հեղինակն արժեքավորում է ժամանակակից հայոց լեզվում, մի բան, որ ոչ միայն այս բաժնի, այլև այս սովոր զբի բարեմասնությունն է:

Հանրագումարի բերելով հարադրական կամ վերլուծական նախորդ ուսումնասիրությունների արդյունքները՝ հեղինակը միաժամանակ հսկայական և բարեխիղճ աշխատանք է կատարել բայական հարադրությունների առանձին տիպերի առանձնացման ու բնութագրման, հիմնական բաղադրիչների բացահայտման, հարադրությունների ու բայական ձույլ բառույթների բառական իմաստների և քերականական հատկանիշների առնչակցությունների հարցի վերլուծման, բառակազմական-քերականական զանազան փաստերի տեսական բնդհանրացման ուղղությամբ: Ըստ կազմության հիմունքների հարադրական բայերը հեղինակը տեսակավորում է յոթ խմբի, որոնցից առանձնապես մեծ ծավալ ունեն հոլովառական հիմունքով կազմված հարադրությունները: Բայի հարադրության բաղադրան տեսակները խմբավորելով՝ հեղինակը բնագրային փաստերի հիման վրա մեկ առ մեկ նշել է ոչ միայն նրանց ձևաբանական և շարահյուսական արժեքները, փոխաբերական իմաստները, այլև պարագայական կամ միտվածության լրացուցիչ իմաստները:

Հայտնի է, որ լեզվական իրակությունների համակողմանի վերլուծման կարևոր հարցերից մեկն էլ լեզվական տվյալ երևույթի կենսունակությամբ, արտադրողական կամ ոչ արտադրողական լինելու հարցն է լեզվական պրոցեսի զարգացման այս կամ այն շրջանում: Այս իմաստով մեծ արժեք է ներկայացնում բայածանցների նշանակությունը ժամանակակից հայերենում (էջ 209—295) բաժինը, որտեղ հեղինակը, օգտագործելով այս ուղղությամբ ընդունելի և կարևոր ընդհանրացումները և մերժելով մի շարք անընդունելի տեսակետներ, ըստ ամենայնի պարզաբանել է բայական ածանցների ձևա-իմաստային առանձնահատկությունները և նրանց կենսունակությամբ հարցերը, որոնք էլ հնագույն և փոխառված ձևերի զործադրման սահմանները, թեև բառակազմական և քերականական իմաստային առնչումների և տարբերությունների ու դրանց հետ կապված այլ բազմաթիվ հարցեր: Հեղինակն իրավացիորեն մերժում է «միջաժանցներ» անվանումը, անընդունելի է համարում տրադիցիա դարձած այն տեսակետը, որով՝ -ան, -են, -ն, -չ ածանցները (սոսկածանցներ) բայի հիմքի նշանակության վրա իբրև թե ոչ մի նոր երկրորդական, ածանցական զաղափար չեն ավելացնում: Նա գտնում է, որ այսպիսի բնութագրերը միայն առանձին դեպքերի համար կարող է ճիշտ լինել, բայց երբեք չի կարող ծառայել իբրև ընդհանուր և վերջնական բնորոշում բոլոր ածանցների ու նրանց զործածության բոլոր դեպքերի համար: Առանձին-առանձին քննելով բաղադրական-քերականական, բաղադրական և զորացման ածանցները՝ հեղինակը զնահատում է նրանց արտադրողական կամ ոչ արտադրողական լինելը, նշում ժողովրդական կենդանի խոսքից առնված ածանցավոր ձևերը, որոնք, մշտնելով բայի համակարգի մեջ՝ ավելի ճկուն ու կենսունակ են դարձնում գրական խոսքի ոճը:

Բայի համակարգի, նրա տեսակավորման ու խոնարհման, ինչպես նաև բայական ձևերի կազմության հարցերին են նվիրված «բայական լծորդները և լծորդությունները» և «բայահիմքեր» (էջ 296—356) բաժինները: Հանրագումարի բերելով լծորդությունների և սրանց հետ կապված խոնարհման տիպերի զարգացման պրոցեսը՝ հեղինակը հանգամանորեն սլաքաբանել է լեզվի կատարելագործման, միօրինականացման ու համահարմարման պրոցեսը: Ա. Արրահամյանը նշում է, որ հին հայերենի երբեմնի հինգ լծորդությունների դիմաց ժամանակակից հայերենը «հասել է միօրինակության, որտեղ համատարած է դարձել և լծորդությունը (չնչին բացառություններով)» (էջ 323): Հենց այդ հիմունքով էլ հեղինակն ընդգծում է, որ ժամանակակից արևելաօջ գրական լեզվում այժմ գործող լծորդությունները իրենց ընդգրկման տեսակետից հավասար և համաժառանգ են, ուստի և բայական համակարգում դրանք տարբեր տեղ են կտրվում: Արդի գրական լեզվի մեջ քերականական ձևերի միօրինականացման, համահարթման հարցի հետ սերտորեն կապվում են նաև բայահիմքերի պատմական փոփոխությունները, հեղինակը գտնում է, որ բայական բառամթերքի արդի դրության մեջ երկու լծորդությունների ընդհանրացում է կատարվում մեկ տիպի մեջ (ն լծորդություն), առաջ բերելով նաև իմբլեթի միօրինակություն, իսկ կրկնատիպ ունեցող սակավաթիվ բայերը ժամանակակից գրական լեզվում աստիճանաբար տիրապետող են դառնում ցույական իմբլեթով:

Հետևողականորեն զարգացնելով բայի դրսևորումների հարուստ ձևերի կազմության և իմաստային կուռ օրինաչափությունների տեսությունը՝ Ա. Արրահամյանը փաստական նյութի գիտական վերլուծության վրա հաստուկ քննության նյութ է դարձրել հայերենի դերբայները



(էջ 357—418)։ Նա գտնում է, որ անորոշ դերայր ի տարրերություն մնացած դերայական ձևերի՝ զրական հայերենի առկա շրջանում դիմավոր ձևերի կազմությանը չի մասնակցում (թեև մի ժամանակ նա մասնակցել է), նրա քերականական դերը միայն շաբանյութական է։ Այստեղ արժև նշել, որ մենագրության հեղինակը ճիշտ է մեկնաբանել ժամանակակից հայոց լեզվի գերբայների ծագման հարցերը, ինչպես՝ ապառնի դերայի ու-ն ծագած է համարում հնագույն ու հույժից, որը համապատասխանորեն ձևափոխվել է (ոչ խմբով) ոչ միայն բայի հույժա-ձևերում, այլև՝ դրանցից առաջացած ապառնի դերայում, վաղակատար դերայի նլ մասնիկի առաջացած է համարում զրաբարի եւ քերարարառի պարզացումից՝ եւ-ն, ենթակայական դերայի ող վերջավորությունը՝ սուղ ձևից և այլն։ Առանձնապես զիտական մեծ արժեք է ներկայացնում քննարկվող հարցի կապակցությամբ խոսքի մասային փոխանցումները և երևույթը դերբայական ձևերի ընդգրկման տեսակետից։

Մենագրության ամենածանրակշիռ մասը բայի սեռի քերականական կարգին նվիրված բաժինն է (էջ 419—722), որի սկզբից պատմական ընդարձակ ակնարկով (419—495) ոչ միայն ցուցադրում, այլև գնահատում և արժեքավորում է հայ քերականագիտական մտքի ձեռք բերած նվաճումները ժամանակակից հայերենի բայական սեռի լուսարանման կապակցությամբ։ Ստեղծագործորեն օգտագործելով հայ և ռուսական զրականության մեջ լրայական սեռի վերաբերյալ եղած տեսակետները՝ հեղինակը սեռի կարգին պատկանող քերականական հասկացություններն իրենց բուն տեսակետով, տարբերակներով և երանգներով բաժանում է սեռադասեր, սեռեր և սեռային առումներ ընդհանուր խմբի մեջ։ Բայական սեռի այսպիսի դասդասման համար հիմք է ծառայել հետազոտվող նյութի յուրահատկությունների վերլուծումը, ժամանակակից արևելահայ զրական լեզվի սեռային նշանակությունների (ներգործական, կրավորական և չեզոք) համակարգում երևան եկող այնպիսի նշանակություններ, որոնք լիակատար չափով չեն հասնում այս կամ այն սեռի նշանակությանը, որոշ չափով մնում են թերի, միաժամանակ չեզոքում են նրանից՝ ունենալով հավելյալ տարրերիչ կողմ, այդ նպատակաուղղված էլ սեռ հասկացությունից բացի հեղինակն ընդունում է նաև սեռի սուրում հասկացությունը, դրանով ներկայացնելով այդ յուրահատկությունները։ Ընդունելով սեռադասեր խումբը՝ հեղինակը տարբերում է երկու սեռադաս՝ անցողական և անանցողական, ըստ որում անցողական սեռադասի խմբի մեջ է տեղադրում ներգործական սեռը և պատմական սեռային առումը, անանցողական սեռադասի մեջ՝ կրավորական, չեզոք սեռերը և միջին-անցողադաս սեռային առումը։ Բայի սեռի տեսակավորման այս հիմնական սկզբունքից բացի, հեղինակը տարբերում է երկու տեսակի անցողականություն և անանցողականություն, այն է՝ սկզբնական և ձևակազմական. սկզբնականային է համարում, երբ բայական բառույթը հատուկ ձևակազմության չի ենթարկվում, իսկ ձևակազմականը, երբ ընդունում է -վ- ածանցը։ Բայի սեռին հատկացված այս ծավալուն բաժնում հեղինակը բազմակողմանիորեն քննում է բայի սեռային տեղաշարժերը, որոշ քանակություն կազմող բայերի կրկնաբանությունը, որոնք սերտորեն կապված են լեզվի պատմական զարգացման ներքին կյանքի հետ և արտացոլում են բայական համակարգի զարգացման ու փոփոխության շատ կողմեր։

Այսպիսիք են ամենաբնորոշանուր գծերով այն արդյունքները, որ Ա. Արրահամյանը ձեռք է բերել իր բարեխիղճ աշխատանքի շնորհիվ, լեզվական երևույթների խորապես մեկնաբանելու, ճիշտ ընդհանրացումներ կատարելու մեծ կարողությամբ։

Այս մենագրության անժխտելի արժանիքներից են, անշուշտ, քննարկվող հարցի կապակցությամբ հեղինակի ստուգարանական բազմաթիվ հղումները, հայոց լեզվի պատմությանն առնչվող մի շարք կարևոր խնդիրների պարզաբանումը, դրոշների երկերից մեջ բերված բնագրային նյութերում բայական սխալ կամ ոչ հանձնարարելի կիրառությունների մասին դիտողությունները (էջ 273, 275, 279, 383, 384, 386 և այլն), Հայերեն բացատրական բառարանում ոչ ճիշտ մեկնաբանությունների վերադասարանումներն ու ճշգրտումները (էջ 286, 287, 625, 653) և այլն։

Գրքում եղած թերություններից անկախ Ա. Արրահամյանի ռաբյը ժամանակակից հայերենում մենագրությունը միակն է իր տեսակի մեջ ոչ միայն իր զիտական բարձր մակարդակով, այլև՝ լեզվական երևույթների համակողմանի ուսումնասիրման յուրահատուկ մեթոդներով և սկզբունքներով և որպես այդպիսին հայերենագիտության ուղադրավ և խոշոր նվաճումներից մեկն է, որից օգտվելու կարիքը կղղան և՛ հայագիտությամբ զբաղվող զիտական աշխատողներն ու ասպիրանտները, և՛ հայոց լեզվի ուսուցիչներն ու դրոշները։